12 (94). ԱԽՉԻԿՆ ՈՒ ՕՁԸ

Թաքավորիմ ախչիկն օր կը հիվընդնա՝ բժիշկ կը փերե, ինչ կէնե՝ չի կրնա բժշկե։ Հաշվե դուս բժիշկ կը փերե, յարանները չի կրնա բժշկե։ Թաքավորը զարմանա կը, կըսե՝ «էս ի՞նչ բան է»։ Էդ ախչկանը հորն օր հոքուն կը հասնի՝ կանչե կը էրկու հատ լըլը, կըսե.— Էսոր հաքուստ ու պաշարը առեք, տարեք անտառը ցկեցեք, էկեք։

Տանին էսոր անտառը վար կը ցկեն, դառնան քուքան, հորը կըսեն օր տարանք կորուցինք, էկանք։

Հիմի էդ ախչիկը անտառին մեչ էսան կայե, էնան կայե, գարուն դուռ է ժամանակը, մեմե մե ձորըմ կը տեսնի, կըսե՝ «Էրթամ էդ ձորը յա կը մեռնիմ, յա ջանըվըրնին կուտեն»։ Կէրթա ման քուքա օրա, մե տեղըմ օխչրի յաթաղ կտեսնի, կէրթա նստի կը, բոլորը կայե օր կուռուճիկմ[1] կաթ է կթած, էդորեն քիչըմ հեռու նստի կը։ Մեմա մե ըժդրհըր օցըմ քուքա լողնա ու կուռուճիկեն կելլե դուս։ Կելլե կէրթա օրա, էս ախչիկը կըսե՝ «Է՛, ես մեկ է մեռած մարթ եմ, այդի օցին լողցած աղուեն մե քիչըմ յարանուս քսեմ»։ Էդիկ բռնե յարանուն կը քսե, ինքն է պուտըմ խմե կը։ Մե խոսկով մարթը մորեն անարատ մաքրվի, կիստըկվի։

Ախչիկը տեսնի կը օր մաքրվավ, կելլե հայրենիկ քուքա հորը տունը։ Հորը տունն օր քուքա, ճամփան մարթիք ըռաստ քուքան, էս ախչկանը հարցընեն կը թե՝ «Դու խո թաքավորին ախչիկը չե՞ս»։

---

1 Անձրևաշրից քարի վրա գոյացած փոս (Ս. Բ.)։

— Հա,— կըսե։

Կըսեն.— Քու վրադ յարա փարա, էդ ինչո՞վ ես լավցե։

Ախչիկը պատմե կը կուռուճիկին քովը պատահածը՝ «Օր էդորեն մաքրվա, իստակ իստկվա»։ Էդ մարթիքը էլի հարցընեն կը թե՝ «Ինչո՞վ դու պրծար յարա փարաներեն». ախչիկը էլի իրենը կըսե։ Էս մարթիք վազեն թաքավորին ըշկիլուս կուտան, թե ախչիկըդ լավցել է, քուքա։

Քիչըմ կանցնի, ախչիկը տուն օր քուքա՝ թաքավորը նոր կը հավատա։